ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2018 թվականի N 388-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետի (բաժնի պետի պաշտոնակատարի) 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 28230-18 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Արմեն Հունանյանին 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ և Էդուարդ Ազարյանին 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի դեկտեմբերի 25
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 388-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Արմեն Հունանյան	ք. Հրազդան	100 000	
2	Էդուարդ Ազարյան	Գ. Պռոշյան	100 000	